ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներքին շուկայում (ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ) համապատասխանեցման գրասենյակին վճարման ենթակա տուրքերի մասին Հանձնաժողովի թիվ 2869/95 կանոնակարգը (ԵՀ) փոփոխող՝ Հանձնաժողովի 2004 թվականի ապրիլի 26–ի թիվ 781/2004 կանոնակարգ (ԵՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով Խորհրդի «Համայնքի ապրանքային նշանի մասին» 1993 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 40/94 կանոնակարգը (ԵՀ)[1] և, մասնավորապես, դրա 139-րդ հոդվածը,

հաշվի առնելով Խորհրդի «Համայնքի ապրանքային նշանի մասին» թիվ 40/94 կանոնակարգը (ԵՀ) կիրարկող՝ Հանձնաժողովի 1995 թվականի դեկտեմբերի 13–ի թիվ 2868/95 կանոնակարգը (ԵՀ)[2],

հաշվի առնելով Համապատասխանեցման գրասենյակին վճարման ենթակա տուրքերի մասին Հանձնաժողովի 1995 թվականի դեկտեմբերի 13–ի թիվ 2869/95 կանոնակարգը (ԵՀ)[3],

Քանի որ.

1) Խորհրդի թիվ 40/94 կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 142–րդ հոդվածը նախատեսում է, որ Համայնքի ապրանքային նշանի կամ Գրասենյակին ներկայացված Համայնքի ապրանքային նշանի հայտի վրա հիմնված միջազգային հայտերի համար գանձվում է տուրք,

2) նույն Կանոնակարգի 154–րդ հոդվածը նախատեսում է, որ Մադրիդի համաձայնագրի կամ Մադրիդի արձանագրության համաձայն միջազգային գրանցման միջոցով Եվրոպական համայնքի տարածքն ընդգրկելու մասին նշումը ազգային ապրանքային նշանի հայտի կամ անդամ պետությունների տարածքն ընդգրկելու մասին նշումի փոխակերպելու համար 108–110–րդ հոդվածները կիրառվում են համապատասխան փոփոխություններով (mutatis mutandis), և, մասնավորապես, 109–րդ հոդվածի 1–ին պարբերությունը նախատեսում է, որ փոխակերպման մասին դիմումը չի համարվում ներկայացված, քանի դեռ չի վճարվել փոխակերպման համար տուրքը,

3) այդ Կանոնակարգի 139–րդ հոդվածի 2–րդ պարբերությունը նախատեսում է, որ Գրասենյակին վճարվելիք տուրքերի չափը սահմանվում է այնպիսի մակարդակով,

[1] ՊՏ, L 11, 14.01.1994թ., էջ 1.
[2] ՊՏ, L 303, 15.12.1995թ., էջ 1:
[3] ՊՏ, L 303, 15.12.1995թ., էջ 33:

որը Գրասենյակի բյուջեի հավասարակշռությունն ապահովելու համար սկզբունքորեն բավարար եկամուտ կերաշխավորի,

4) սույն Կանոնակարգի 11–րդ, 12–րդ և 13–րդ հոդվածները նախատեսում են Միջազգային բյուրոյին վճարման ենթակա տուրքերը՝ դրա վճարման կանոններին համապատասխան,

5) այդ Կանոնակարգի 139–րդ հոդվածի 3-րդ պարբերությունը նախատեսում է, որ տուրքերի մասին կանոնակարգը փոփոխվում է 158–րդ հոդվածով սահմանված կարգով,

6) սույն Կանոնակարգով նախատեսված միջոցները համապատասխանում են Տուրքերի հարցերով կոմիտեի եզրակացությանը, Կիրարկման կանոններին և Ներքին շուկայում (ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ) համապատասխանեցման գրասենյակի բողոքարկման խորհուրդների ընթացակարգին,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Ներքին շուկայում (ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ) համապատասխանեցման գրասենյակին վճարման ենթակա տուրքերի մասին թիվ 2869/95 կանոնակարգում (ԵՀ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. 2–րդ հոդվածի 20–րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

(եվրոյով)

«20. Համայնքի ապրանքային նշանի հայտը կամ Համայնքի ապրանքային նշանը՝	200»

2. 2–րդ հոդվածի վերջում ավելացնել հետևյալը՝

(եվրոյով)

«31. Գրասենյակին միջազգային հայտ ներկայացնելու համար տուրք (հոդված 142«5»)	300»

3. 2–րդ հոդվածում և հոդվածներ 3«3»–ում և 8«3»«բ»–ում ԵԱՄ–ին կատարված հղումները փոխարինել եվրոյին հղումով։

4. 6–րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 6

Արժույթները

Բոլոր վճարումները, ներառյալ Ղեկավարի կողմից հոդված 5«2»–ի համաձայն թույլատրված որևէ եղանակով վճարումները, կատարվում են եվրոյով։»

5. 10–րդ հոդվածից հետո ավելացնել հետևյալ նոր՝ 11–րդ, 12–րդ, 13–րդ և 14–րդ հոդվածները.

«Հոդված 11

Եվրոպական համայնքի տարածքն ընդգրկելու մասին նշում պարունակող միջազգային գրանցման համար առանձին տուրքը

1. Եվրոպական համայնքի տարածքն ընդգրկելու մասին նշում պարունակող միջազգային հայտի հայտատուից պահանջվում է Միջազգային բյուրոյին վճարել առանձին տուրք՝ Մադրիդի արձանագրության հոդված 8«7»–ի համաձայն Եվրոպական համայնքի տարածքն ընդգրկելու մասին նշումի համար։

2. Միջազգային գրանցման իրավատիրոջից, որը միջազգային գրանցումից հետո Եվրոպական համայնքը նշող տարածքային ընդլայնման մասին դիմում է ներկայացնում, պահանջվում է Մադրիդի արձանագրության հոդված 8«7»–ի համաձայն Եվրոպական համայնքի տարածքն ընդգրկելու մասին նշումի համար Միջազգային բյուրոյին վճարել առանձին տուրք։

3. 1–ին կամ 2–րդ պարբերություններով նախատեսված տուրքի չափը, ինչպես սահմանված է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի կողմից՝ Մադրիդի համաձայնագրով և արձանագրությունով նախատեսված Ընդհանուր կանոնակարգերի կանոն 35«2»–ի համաձայն, հետևյալ գումարների համարժեքն է՝ արտահայտված շվեյցարական ֆրանկով.

ա) անհատական նշանի համար՝ 1875 եվրո՝ գումարած, եթե կիրառելի է, 400 եվրո ապրանքների կամ ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար,

բ) Հանձնաժողովի թիվ 2868/95 կանոնակարգի (ԵՀ) կանոն 121«1»–ում նշված կոլեկտիվ նշանի համար՝ 3675 եվրո՝ գումարած, եթե կիրառելի է, 800 եվրո ապրանքների և ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար։

Հոդված 12

Եվրոպական համայնքի տարածքն ընդգրկելու մասին նշում պարունակող միջազգային գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու համար առանձին տուրքը

1. Եվրոպական համայնքի տարածքն ընդգրկելու մասին նշում պարունակող միջազգային գրանցման իրավատիրոջից պահանջվում է, որպես միջազգային գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու համար տուրքերի մի մաս, Միջազգային բյուրոյին վճարել առանձին տուրք՝ Մադրիդի արձանագրության հոդված 8«7»–ի համաձայն Եվրոպական համայնքի տարածքն ընդգրկելու մասին նշումի համար։

2. 1–ին պարբերությունում նշված տուրքի չափը, ինչպես սահմանված է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի կողմից՝ Մադրիդի համաձայնագրով և արձանագրությունով նախատեսված Ընդհանուր կանոնակարգերի կանոն 35«2»–ի համաձայն, հետևյալ գումարների համարժեքն է՝ արտահայտված շվեյցարական ֆրանկով՝

ա) անհատական նշանի դեպքում՝ 2300 եվրո՝ գումարած 500 եվրո միջազգային գրանցման մեջ պարունակվող ապրանքների և ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար.

բ) Հանձնաժողովի թիվ 2868/95 կանոնակարգի (ԵՀ) կանոն 124«1»–ում նշված կոլեկտիվ նշանի դեպքում՝ 4800 եվրո՝ գումարած 1000 եվրո միջազգային գրանցման մեջ պարունակվող ապրանքների և ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար։

Հոդված 13

Պահպանության տրամադրումը մերժելուց հետո տուրքերը վերադարձնելը

1. Եթե հայտի մերժումը վերաբերում է Եվրոպական համայնքի տարածքն ընդգրկելու մասին նշումի մեջ պարունակվող բոլոր ապրանքներին և ծառայություններին, ապա տուրքի՝ Խորհրդի թիվ 40/94 կանոնակարգի (ԵՀ) հոդվածներ 149«4»–ի և 151«4»–ի համաձայն վերադարձման ենթակա գումարը հետևյալն է՝

ա) անհատական նշանի դեպքում՝ 1100 եվրո՝ գումարած 200 եվրո միջազգային գրանցման մեջ պարունակվող ապրանքների և ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար.

բ) կոլեկտիվ նշանի դեպքում՝ 2200 եվրո՝ գումարած 400 եվրո միջազգային գրանցման մեջ պարունակվող ապրանքների և ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար։

2. Եթե մերժումը վերաբերում է Եվրոպական համայնքի տարածքն ընդգրկելու մասին նշումի մեջ պարունակվող ապրանքների և ծառայությունների միայն մի մասին, ապա

տուրքի՝ Կանոնակարգի հոդվածներ 149«4»–ի կամ 151«4»–ի համաձայն վերադարձման ենթակա գումարը հավասար է սույն Կանոնակարգի հոդված 11«3»–ի համաձայն դասերի համար վճարման ենթակա տուրքերի և դասերի համար այն տուրքերի տարբերության 50 տոկոսին, որոնք հոդված 11«3»–ի համաձայն վճարման ենթակա կլինեին, եթե Եվրոպական համայնքի տարածքն ընդգրկելու մասին նշումը ներառեր միայն այն ապրանքները և ծառայությունները, որոնց համար միջազգային գրանցումը շարունակում է պահպանվել Եվրոպական համայնքում։

3. Գումարը վերադարձվում է Հանձնաժողովի թիվ 2868/95 կանոնակարգի կանոն 113«2»«բ»–ից «դ»–ի կամ կանոն 115«3»«բ»–ից «դ»–ի և «4»–ի համաձայն Միջազգային բյուրոյին հաղորդում տալուց հետո։

4. Գումարը վերադարձվում է միջազգային գրանցման իրավատիրոջը կամ նրա ներկայացուցչին։

Հոդված 14

1–10–րդ հոդվածները չեն կիրառվում Միջազգային բյուրոյին վճարման ենթակա առանձին տուրքի նկատմամբ։»։

Հոդված 2

Սույն Կանոնակարգն Եվրոպական համայնքի համար ուժի մեջ է մտնում Մադրիդի արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրը: Սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվա մասին նշումը հրապարակվում է Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անդամ պետությունների համար և դրանցում գործում է անմիջականորեն:

Կատարված է Բրյուսելում, 2004 թվականի ապրիլի 26-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Ֆրեդերիկ Բոլկեշտայն

Հանձնաժողովի անդամ